Արձանագրություն №1

2019թ. սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ. Հովհաննիսյանը և Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Ամբիոնի 2019-2020 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության /դասաբաշխում/ իրազեկումը դասախոսներին:
2. Ամբիոնի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
3. Մագիստրատրոսական և ավարտական աշխատանքների թեմաների ներկայացման և չափանիշների մասին:
4. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթների /ԱՈՒՄՓ/ հաստատման մասին:
5. Ընտրովի դասընթացների հաստատման մասին:
6. Ամբոնի դասընթացների՝ նոր դասիչներով առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման մասին:
7. Դասընթացների անվանումների փոփոխության մասին:
8. Ընթացիկ հարցեր /Google classroom հարթակի մասին/:

1. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի 2019-2020 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության /դասաբաշխում/ մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը դասախոսական կազմին տեղեկացրեց, որ տեղին են ունեցել որոշակի փոփոխություններ. ամբիոնում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3500-ից ավել ժամ, այդ իսկ պատճառով կրճատումներից խուսափել հնարավոր չի եղել: Այդ ամենով հանդերձ, Վ.Հովհաննիսյանը նշեց, որ կատարվել է բարեխիղճ բաշխում:

2. ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ պետք է հետևել աշխատանքային պլանին և շարժվել դրան համապատասխան, նա նաև նշեց, որ աշխատանքային պլանը համապատասխանեցվել է ուսումնական աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Միաձայն հաստատել աշխատանքային պլանը:

3. ԼՍԵՑԻՆ - Մագիստրատրոսական և ավարտական աշխատանքների թեմաների ներկայացման և չափանիշների մասին մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները պետք է լինեն նոր ու արդիական և հիմնականում պետք է ներկայացվեն դասավանդման մեթոդիկայի տեսանկյունից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ներկայացնել բոլոր չափանիշներին համապատասխանող թեմաներ:

4. ԼՍԵՑԻՆ - 2018-2019 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթների /ԱՈՒՄՓ/ հաստատման մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է. Հովհաննիսյանը, Ա.Կոծինյանը, Լ. Սարվազյանը: Է.Հովհաննիսյանը նշեց, որ ուսանողները պետք է ունենան ծրագրով նախատեսված տեքստերը, հարցաշարերը և փաթեթները: Փոխվել են ամբիոնի և դասընթացների կոդերը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առաջին կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթները:

5. ԼՍԵՑԻՆ - Ընտրովի դասընթացների հաստատման մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է.Հովհաննիսյանը նրկայացրեց առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանով նախատեսված ընտրովի դասընթացների վերնագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քննարկումների արդյունքում որոշեցին հաստատել 2019-2020 ուստարում ամբիոնի՝ առկա բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող ընտրովի դասընթացների առարկայացանկը հետևյալ կերպ.

h/h	Առարկայի անվանումը համաձայն ուսումնական պլանի	Ֆակուլ-տետ	Որ կրթական աստիճանում է դասավանդվում /բակալավրիատ, մագիստրատուրա	Դասավանդող դասախոսի (ների)/ազգանուն անուն,գիտ աստիճան,կոչում/	Որ կուրսում է դասավանդ-վում
1.	Ը/Դ (2) – Ազգային սահմանադրական- քաղաքական մտքի պատմություն	ՊԻ-4	Մագիստրատուրա	Սարվազյան Լ. /Փ.գ.թ., դոցենտ/	1-ին կուրս 2-րդ կիս.
1.	Ը/դ (3) Հեղինակային իրավունք	Կ-7	Մագիստրատուրա	Մանուկյան Ս. /Ի.գ.թ., դոցենտ/	1-ին կուրս 2-րդ կիս.
2.	Ը/դ (3) Կիբերհանցագործությունների դեմ պայքարի հատուկ մեթոդները	ՊԻ-4	Մագիստրատուրա	Երեմյան Արա /Ի.գ.թ., դոցենտ/	2-րդ կուրս 1-ին կիս.
1.	Ը/դ Դատախազության դերը պետական մարմինների համակարգում և նրա գործունեության օրենսդրական հիմունքները	ՊԻ-4	Մագիստրատուրա	Հովսեփյան Աղվան /ի.գ.դ., պրոֆեսոր պ./	2-րդ կուրս 1-ին կիս.
2.	Ը/դ (1) Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն	ՊԻ-4	Մագիստրատուրա	Սարվազյան Լ. /Փ.գ.թ., դոցենտ/	2-րդ կուրս 1-ին կիս.
3.	Ը/դ (3) Մարդու իրավունքների և ազատությունների քրեաիրավական պաշտպանության կիրառման ասպեկտները և դասավանդման մեթոդիկան	ՊԻ-4	Մագիստրատուրա	Տոնոյան Նարինե /ի.գ.թ., դոցենտ/	2-րդ կուրս 1-ին կիս
4.	Ը/դ Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ	ՊԻ-4	Մագիստրատուրա	Հովսեփյան Աղվան /ի.գ.դ., պրոֆեսոր պ./	2-րդ կուրս 2-րդ կիս.
5.	Ը/դ Միջազգային հանրային իրավունքի հիմունքներ	ՊԻ-4	Մագիստրատուրա	Հովհաննիսյան Վոլոդյա /Ի.գ.դ.,պրոֆ./	2-րդ կուրս 2-րդ կիս.
6.	Ը/դ Հեղինակային իրավունք	Կ-7	Մագիստրատուրա	Մարուքյան Գայանե /Ի.գ.թ., դոցենտ/	2-րդ կուրս 2-րդ կիս.

h/h	Առարկայի անվանումը	Ֆակուլ-տետ	Որ կրթական աստիճանում է դասավանդվում /բակալավրիատ, մագիստրատուրա	Դասավանդող դասախոսի (ների)/ազգանուն անուն,գիտ աստիճան,կոչում/	Որ կուրսում է դասավանդ-վում
1.	Ը/դ (3) – Ընտանեկան իրավունք	ՊԻ-4	Բակալավրիատ	Կարեյան Արմեն	4-րդ կուրս 1-ին կիս.
2.	Ը/դ (3) Քաղաքացիական կրթություն	ՊԻ-4	Բակալավրիատ	Սուքիասյան Հ. /Ք.գ.թ., դոցենտ/	4-րդ կուրս 1-ին կիս.

6. ԼՍԵՑԻՆ – Ամբոնի դասընթացների՝ նոր դասիչներով առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է.Հովհաննիսյանը նշեց, որ ամբիոնի անվանման փոփոխության հետ կապված փոփոխվել է նաև ամբիոնի պաշտոնական էլեկտրոնային հասցեն, որը դարձել է social15@aspu.am , և ամբիոնի դասընթացները ստացել են նոր դասիչներ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել նոր դասիչներով դասընթացների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները: /Կից ներկայացվում է նոր դասիչներով դասընթացների ցանկը/:

7. ԼՍԵՑԻՆ – ՀԲ 5-րդ կուրսի 2-րդ կիսամյակի «Եվրոպական իրավունք» և մագիստրատուրայի «ԵՄ ինստիտուտների և ընթացակարգերի տեսական հիմնահարցեր» դասընթացների փոփոխության մասին:

Զեկուցող՝ Է.Հովհաննիսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է.Հովհաննիսյանը նշեց, որ մասնագիտության առանձնահատկություններից ելնելով անհրաժեշտություն է առաջացել ՀԲ 5-րդ կուրսի 2-րդ կիսամյակի «Եվրոպական իրավունք» և մագիստրատուրայի «ԵՄ ինստիտուտների և ընթացակարգերի տեսական հիմնահարցեր» դասընթացների փոխարինել այլ դասընթացներով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քննարկումների արդյունքում որոշվեց ՀԲ 5-րդ կուրսի 2-րդ կիսամյակի «Եվրոպական իրավունք» դասընթացը փոխարինել «Իրավաստեղծ գործունեությունը ՀՀ-ում» դասընթացով, իսկ «ԵՄ ինստիտուտների և ընթացակարգերի տեսական հիմնահարցեր» դասընթացը՝ «Իրավունքի սոցիոլոգիա» դասընթացով:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №2

2019թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսոր Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Երեմյանը, Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարների և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**
2. «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման մասին: **/զեկ. Ա.Կարեյան/**
3. «Հասարակագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների ղեկավարի և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**
4. 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**
5. Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկում: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**
6. Ընթացիկ հարցեր /գիտական հրատարակությունների ցանկը, online տեղեկագրերի լրացման հարցը/:

1. **ԼՍԵՑԻՆ** - «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարների և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է. Հովհաննիսյանը ներկայացրեց ավարտական 10 աշխատանք գրող ուսանողների ցանկը, ղեկավարներին և ընտրված թեմաները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Միաձայն հաստատել «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարներին և թեմաները: /ցուցակը ներկայացվում է կից/

2. **ԼՍԵՑԻՆ** - «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման մասին: **/զեկ. Ա.Կարեյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը, Ա.Կարեյանը, ներկայացրեցին «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման մասին: Ա.Կարեյանը հայտնեց, որ պրակտիկայի ընթացքում կղեկավարի թվով 7 ուսանողների, ցանկն արդեն պատրաստ է, հայտնի է նաև, թե որտեղ կանցկացվի պրակտիկան:

3. **ԼՍԵՑԻՆ** - «Հասարակագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների ղեկավարի և թեմաների մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ «Հասարակագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսից այս ամբիոնում կուրսային աշխատանք է ներկայացնելու 3 ուսանող, իսկ ղեկավար կլինի Ա.Կոծինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Միաձայն հաստատել «Հասարակագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների ղեկավարին և թեմաները: /ցուցակը ներկայացվում է կից/

4. **ԼՍԵՑԻՆ** 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**

   ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսները ներկայացրեցին 1-ին կիսամյակի /բակալավրիատ և մագիստրատուրա/ երկու ընթացիկ ստուգումների և քննությունների իրենց առարկայական հարցաշարերը: Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ դասախոսները հաստատումից հետո հարցաշարերը տեղադրեն էլեկտրոնային ուսուցման Google classroom հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել /միաձայն/ 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի /բակալավրիատ և մագիստրատուրա/ միջանկյալ գրավոր աշխատանքների հարցաշարերն ու հարցատոմսերը:

5. **ԼՍԵՑԻՆ** - Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ կատարելու մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան, ամբիոնի դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Քննարկման ընթացքում Հայկ Սուքիասյանը նկատեց, որ օրենքի 3-րդ հոդվածում նշվում է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի մասին: Ակնհայտ է, որ կա սկզբունքային տարբերություն նախկին օրենքի համեմատ: Նախագծում մագիստրոսի աստիճանին հետևում է դոկտորի գիտական աստիճանը: Սակայն օրենքում հստակեցված չէ կամ պարզ չէ, թե ի՞նչ է լինելու նախկին օրենքով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց պարագայում: Հայկ Սուքիասյանը առաջարկեց օրենքի նախագծում հստակություն մտցնել տվյալ խնդրի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – առաջարկությունը ներկայացնել քննարկման:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №3

2019թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին պատմական գիտությունների թեկն., դոցենտ Է. Հովհաննիսյանը, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Շիրինյանը, իրավական գիտությունների թեկն., դոցենտ Ս.Բարխուդարյանը, փիլիսոփայական գիտությունների թեկն., դոցենտ Լ.Սարվազյանը, քաղաքական գիտությունների թեկն., դոցենտ Հ.Սուքիասյանը:

Օրակարգում՝

1. Մարինե Արթուրի Կիրակոսյանի ԻԳ.00.02- Քաղաքական ինստիտուտները և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման <<Հակամարտությունների կարգավորման գործընթացի ժամանակ ժամանակավոր միջազգային կառավարման կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը>> թեկնածուական ատենախոսության քննարկումը /գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր Ռ. Կարապետյան/:

ԼՍԵՑԻՆ Մարինե Արթուրի Կիրակոսյանի ԻԳ.00.02- Քաղաքական ինստիտուտները և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման <<Հակամարտությունների կարգավորման գործընթացի ժամանակ ժամանակավոր միջազգային կառավարման կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը>> թեկնածուական ատենախոսության քննարկումը /գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր Ռ. Կարապետյան/:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Շիրինյանը,փիլիսոփայական գիտությունների թեկն., դոցենտ Լ.Սարվազյանը, քաղաքական գիտությունների թեկն., դոցենտ Հ.Սուքիասյանը:

Հակամարտությունների կարգավորումը միջազգային հարաբերությունների ամենաբարդ և երկարատև գործընթացներից է, քանի որ կրում է ոչ միայն հակամարտության կողմերի, այլև ազդեցիկ պետությունների շահերի բախումների ազդեցությունը: Խնդիրների ուսումնասիրությունը պահանջում է միջգիտակարգային մոտեցում և տարբեր գիտակարգերի գիտելիքների ու հմտությունների համադրում, ունի հստակ ընդգծված (աշխարհա)քաղաքական և միջազգային իրավունքին առնչվող բաղադրիչներ և այլն: Հայաստանի Հանրապետության համար այն ունի նաև բացառիկ նշանակություն, քանի որ առնչվում է կենսական նշանակություն ունեցող հիմնախնդրի՝ Արցախյան հակամարտության լուծմանը: Հատկապես պետք է ընդգծել այն հանգամանքը, որ Հայաստանում հիմնական ուշադրությունը կենտրոնացած է հիմնախնդրի ելքի վրա և նվազ ուշադրություն է դարձվում գործընթացի այն բաղադրիչներին (արտաքին միջազգային կառավարման խնդիր, փախստականների խնդիր, պետական կառավարման խնդիր և այլն), որոնք թեև ուղիղ կապված չեն լուծման հետ, սակայն դրա վրա ունեն շատ մեծ ազդեցություն:

Մարինե Արթուրի Կիրակոսյանի ԻԳ.00.02 մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի թեման խիստ արդիական է և ունի զգալի տեսական կշիռ ինչպես էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման, այնպես էլ պետականաշինության գործընթացների շրջանակում: Աշխատանքում առաջ քաշված խնդիրներն ու դրանց համար առաջարկվող լուծումներն ունեն նաև կարևոր կիրառական նշանակություն այդ գործընթացների արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Հատկանշական է, որ ատենախոսն անդրադարձել է ոչ միայն բուն խնդրին, այլև դրան հարակից իրավական ու քաղաքական կոնցեպտներին՝ այդ թվում չմիջամտության և ինքնիշխանության սկզբունքների բովանդակության մեջ գրանցված փոփոխությանը, ինքնիշխանության չափումներին, միջազգային վերհսկողության պայմաններում պետականաշինության գործընթացի առանձնահատկություններին ու մարտահրավերներին և այլն: Կարծում ենք, որ առանց վերոնշյալ խնդիրների պարզաբանման, թեմայի ուսումնասիրությունը կլիներ ոչ լիարժեք՝ հաշվի առնելով ուսումնասիրվող խնդրի առանձնահատուկ բնույթը:
Աշխատանքում դիտարկված երեք դեպքերի վերլուծությունը հնարավորություն է տվել վերհանել միջազգային կառավարման առանձնահատկություններն ու մարտահրավերները, առանձին միջավայրերում դրա տարբեր դրսևորումները, մեխանիզմի ռազմավարության հիմքում ընկած խնդիրները, ինչի հիման վրա ատենախոսը ներկայացրել է արժեքավոր առաջարկություններ՝ ուղղված միջազգային կառավարման արդյունավետության բարձրացմանը: Հատկանշական է, որ ատենախոսը դիտարկել է ոչ միայն միջազգային կառավարման արդյունավետությունը դրա կիրառման կոնկրետ դեպքերում, այլև տեսագործնական ամուր հիմքի վրա կարողացել է ուրվագծել դրա կիրառման հնարավորություններն ու մարտահրավերներն Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացի շրջանակներում: Ընդսմին, ատենախոսն առաջ է քաշել նաև մի քանի առանցքային նախապայմաններ, որոնց բավարարման դեպքում միայն միջազգային կառավարումը կարող է դիտարկվել որպես հակամարտության կարգավորման գործընթացի մաս: Կարծում ենք՝ այդ նախապայմանների ներակայացումն արժեքավոր է, և դրանք լիովին բխում են կատարված լայնածավալ ուսումնասիրության արդյունքներից:
Ատենախոսն օգտագործել է թեմայի վերաբերյալ առկա զգալի թվով գիտական հոդվածներ ու մենագրություններ, ուսումնասիրել է տարբեր պաշտոնական աղբյուրներ, ՄԱԿ գլխավոր քարտուղարների առանձին շրջաններում ներկայացրած զեկույցներ, Անվտանգության խորհրդի ու Գլխավոր Ասամբլեայի առանցքային բանաձևեր, ինչն անկասկած ապահովել է ձևակերպված եզրակացությունների արժանահավատությունը: Ատենախոսը լայնածավալ աշխատանք է կատարել միջազգային կառավարման մեխանիզմի իրավական բաղադրիչի հետազոտության ուղղությամբ, մասնավորապես՝ 1) կոնտենտ վերլուծության միջոցով իրականացրել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարների զեկույցների վերլուծություն, ինչի հիման վրա դասակարգվել են այն հարցերը, որոնք այսօր այլևս չեն տեղավորվում ներպետական իրավասության շրջանակներում և դարձել են միջազգային կարգավորման առարկա, 2) առանձնացվել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գործողությունները սահմանափակող և անուղղակի մեխանիզմները, 3) հստակեցվել է միջազգային կառավարման լեգիտիմության հարցը:
Ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները լիարժեք ընդգրկված են ատենախոսի հրատարակած գիտական աշխատանքներում: Հարկ է ընդգծել, որ

դրանցից մեկը տպագրվել է “Democracy and Security” հանդեսում, որն ընդգրկված է գիտական հանդեսների scopus միջազգային շտեմարանում: Հաշվի առնելով հանդեսի խմբագրակազմը, որում ներառված են նաև այդ թեմայով զբաղվող հայտնի մասնագետներ, կարելի է պնդել, որ աշխատանքը դրական փորձաքննություն է անցել նաև միջազգային գիտական շրջանակներում:

Այսուհանդերձ, կցանկանայինք ներկայացնել հետևյալ նկատառումներն ու դիտողությունները ատենախոսության վերաբերյալ.

1. Ատենախոսությունում օգտագործված գրականության ցանկը կազմված է ոչ ստանդարտ ձևով:
2. Ատենախոսությունում օգտագործված գրականության մեջ փոքր է հայերեն գիտական աշխատանքների թիվը:
3. Ատենախոսությունում խնդրի իրավական բաղադրիչին նվիրված է գրեթե մեկ գլուխ: Ցանկալի կլիներ այդ բաղադրիչի ուսումնասիրությունը սահմանափակել ավելի սեղմ անդրադարձով:
4. Օգտակար կլիներ, եթե հեղինակը բացի եզրակացություններից, ներկայացներ նաև առաջարկություններ Արցախի հիմնախնդրի վերաբերյալ:

Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ նշված դիտարկումները որևէ ձևով չեն նվազեցնում կատարված աշխատանքի գիտական և գործնական կարևոր նշանակությունը: Ատենախոսը կատարել է համընդգրկուն, հստակ ձևակերպումներով և հիմնավորված եզրակացություններով ուսումնասիրություն: Մարինե Արթուրի Կիրակոսյանի <<Հակամարտությունների կարգավորման գործընթացի ժամանակ ժամանակավոր միջազգային կառավարման կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը>> ատենախոսությունը լիովին բավարարում է ԻԳ.00.02 <<Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ>> մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №4

2019թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսոր Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ս.Մանուկյանը,Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության հեռակա բակալավրի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարների և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**
2. «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի պետական որակավորման քննությանը ավարտական աշխատանքի պաշտպանությամբ մասնակցելու թույլտվության համար դիմած ուսանողներ Սարգիս Յուրիկի Սարգսյանի, Ենոք Սամսոնի Բաղրամյանի, Բելլա Գարեգինի Գրիգորյանի ավարտական աշխատանքների ղեկավարման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**
3. «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին: **/զեկ. Ա.Կարեյան/**
4. Ընթացիկ հարցեր /հայտարարություններ/:

1. ԼՍԵՑԻՆ - «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության հեռակա բակալավրի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարների և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է. Հովհաննիսյանը ներկայացրեց ավարտական 22 աշխատանք գրող ուսանողների ցանկը, ղեկավարներին և ընտրված թեմաները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Միաձայն հաստատել «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության հեռակա բակալավրի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարներին և թեմաները: /ցուցակը ներկայացվում է կից/

2. ԼՍԵՑԻՆ - «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի պետական որակավորման քննությանը ավարտական աշխատանքի պաշտպանությամբ մասնակցելու թույլտվության համար դիմած ուսանողներ Սարգիս Յուրիկի Սարգսյանի, Ենոք Սամսոնի Բաղրամյանի, Բելլա Գարեգինի Գրիգորյանի ավարտական աշխատանքների ղեկավարման հարցը: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ.գ.թ., դոցենտ Է.Հովհաննիսյանը, դասախոս Ա.Կարեյանը և ի.գ.թ., դոցենտ Ս.Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ամբիոնը պատրաստ է ղեկավարելու հեռակա ուսուցման համակարգի ուսանողներ Սարգիս Յուրիկի Սարգսյանի, Ենոք Սամսոնի Բաղրամյանի, Բելլա Գարեգինի Գրիգորյանի ավարտական աշխատանքները:

3. **ԼՍԵՑԻՆ** - «Հասարակագիտություն» մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին: **/զեկ. Ա.Կարեյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – պրակտիկայի ղեկավար Ա.Կարեյանը ներկայացրեց Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում անցկացվող պրակտիկայի ընթացքը: Հայտնեց, որ իր խմբի 7 ուսանողները հաճախում են նորմալ և պրակտիկայի ավարտից հետո նրանց ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կգնահատվեն:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №5

2019թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կոծինյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների ընթացքը: **/զեկ. դասախոսներ/**
2. Ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: **/զեկ. դասախոսներ/**
3. Պրոռեկտոր Ա.Երեմյանի՝ կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի թեմայով 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ինտեգրված դասերի միջոցով դասախոսություններ կազմակերպելու գրության մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների ընթացքը: **/զեկ. դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Է.Հովհաննիսյանը և Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մագիստրատուրայի 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների հանձնման վերջնաժամկետ սահմանել դեկտեմբերի 10-ը:

2. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: **/զեկ. դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը և ամբիոնի դասախոսները: Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, Ա.Կոծինյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Ս.Բարխուդարյանը բանավոր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները՝ հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: Հայտնեցին, որ նախատեսված բոլոր նյութերն ու հարցաշարերը տեղադրված են հարթակում,

պրակտիկաների ավարտից հետո կտրվեն նաև գնահատվող հանձնարարությունները: Է. Հովհաննիսյանը նշեց, որ 1-ին կիսամյակում Google Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների կատարած աշխատանքը համարում է բավարար:

3. **ԼՍԵՑԻՆ** - Պրոռեկտոր Ա.Երեմյանի՝ կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի թեմայով 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ինտեգրված դասերի միջոցով դասախոսություններ կազմակերպելու գրության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է. Հովհաննիսյանը և ամբիոնի դասախոսները: Է. Հովհաննիսյանը առաջարկեց ինտեգրված դասերի միջոցով կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի թեմայով դասախոսություններ կազմակերպելու համար «Իրավագիտություն» դասընթացի շրջանակում մեկ դասախոսություն նվիրել վերոնշյալ թեմային:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ի պատասխան պրոռեկտորի գրության՝ բուհի մյուս ֆակուլտետներում ինտեգրված դասերի միջոցով «Իրավագիտություն» դասընթացի շրջանակում մեկ դասախոսություն հատկացնել կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի թեմային:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ. Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №6

2019թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը և Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Հասարակագիտության ամբիոնի 2019թ. հաշվետվության հաստատման մասին:

ԼՍԵՑԻՆ - Հասարակագիտության ամբիոնի 2019թ. հաշվետվության հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է. Հովհաննիսյանը և ամբիոնի դասախոսները:

ՈՐՈՇԵՑԻՆ - **Միաձայն** հաստատել Հասարակագիտության ամբիոնի 2019թ. հաշվետվությունը:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №7

2019թ. դեկտեմբերի 19-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Գ.Մարուքյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն:
2. Դասախոսների՝ 2018-2019 ուստարվա հաշվետվությունների ներկայացում:
3. Կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի դասավանդման ընթացքի մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - «Իրավագիտություն /մանկավարժություն/» մասնագիտության հեռակա մագիստրատուրայի 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների հիմնական դրույթների հակիրճ ներկայացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նախապաշտպանությանը ներկա մագիստրոսները ներկայացրեցին իրենց մագիստրոսական ատենախոսությունների հիմնական դրույթները: Նախապաշտպանությանը ներկա չէր Արուս Հակոբյանը և Դավիթ Վարդանյանը: Ուսանողները ներկայացրեցին իրենց աշխատանքները, որոնց պատրաստվածության մակարդակը այնքան էլ չգոհացրեց ներկաներին և նրանց հանձնարարվեց ավելի լավ պատրաստվել և բացակա մագիստրոսների հետ ներկայանալ հունվարի 20-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Աշխատանքները հանձնել գրախոսման և նախապաշտպանությունն իրականացնել 20.01.2019թ.-ին:

2. **ԼՍԵՑԻՆ** Դասախոսների՝ 2018-2019 ուստարվա հաշվետվությունների մասին: **/զեկ. դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ կատարված աշխատանքների վերաբերյալ դասախոսների նախորդ ուստարվա հաշվետվությունները պետք է անպայման ներկայացվեն ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ - Դասախոսների կատարած աշխատանքների հաշվետվություններն ընդունել ի գիտություն և եռօրյա ժամկետ սահմանվեց այն դասախոսների համար, ովքեր դեռ չեն ներկայացրել:

3. **ԼՍԵՑԻՆ** - Կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի դասավանդման ընթացքի մասին: **/զեկ. Լ.Սարվազյան, Հ.Սուքիասյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը և Է.Հովհաննիսյանը: Դասախոսները հայտնեցին, որ իրենց կողմից դասավանդվող առարկաների շրջանակներում բուհի բոլոր ֆակուլտետներում համակցված դասի միջոցով անցկացվել է կոռուպցիայի և դրա դեմ պայքարի կառուցակարգերի վերաբերյալ նյութի մատուցում և քննարկում:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №8

2020թ. հունվարի 20-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանը, դասախոսներ Ա.Երեմյանը, Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ա.Մանուկյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը, Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ:
2. 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփման և հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկման անցկացման ու էլեկտրոնային աշխատանքի գնահատման մասին՝ մշտադիտարկման ցուցիչներին համապատասխան:
3. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի և հեռակա ուսուցման 1-ին և երկրորդ կուրսերի 2-րդ կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների ներկայացման և հաստատման մասին:
4. Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն:
5. Առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների պաշտպանություն:
6. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: **/զեկ. դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - - Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ սա այս ուստարվա 1-ին կիսամյակում նախատեսված Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ դասախոսների արդեն երկրորդ հաշվետվությունն է, որով կամփոփվեն կիսամյակում կատարված աշխատանքները:

Նիստին ներկա դասախոսները ներկայացրեցին իրենց հաշվետվությունները՝ հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ և մտահոգություն հայտնեցին, որ շատ ուսանողների ակտիվությունը հարթակում շատ մեծ չէ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Google Classroom էլեկտրոնային հարթակում ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի հաշվետվություններն ընդունել ի գիտություն և աշխատել էլեկտրոնային հարթակում աշխատանքն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար:

2. **ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփման և հարթակում դասախոսների

գործունեության մշտադիտարկման անցկացման ու էլեկտրոնային աշխատանքի գնահատման մասին՝ մշտադիտարկման ցուցիչներին համապատասխան: **/զեկ. Է.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Հովհաննիսյանը ամբիոնի դասախոսներին հայտնեց, որ ամբիոնի կողմից հաստատված մշտադիտարկման ցուցիչներին համապատասխան իրականացվել է 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփում և հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկման անցկացում ու էլեկտրոնային աշխատանքի գնահատում և ներկայացրեց դրանք:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ներկայացված մշտադիտարկման և գնահատման արդյունքներն ընդունել ի գիտություն և աշխատել մյուս կիսամյակում էլ ավելի բարձր արդյունքներ ապահովելու ուղղությամբ: /կից ներկայացվում են մշտադիտարկման և գնահատման արդյունքները:

3. **ԼՍԵՑԻՆ** -2019-2020 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի և հեռակա ուսուցման 1-ին և երկրորդ կուրսերի 2-րդ կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների ներկայացման և հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դասախոսները ներկայացրեցին 2-րդ կիսամյակում դասավանվող դասընթացների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները՝ 1-ին և 2-րդ կուրսերինը՝ նոր ձևաչափով, որոնք մինչև 2-րդ կիսամյակի դասերի սկիզբը պետք է տեղադրվեն Google Classroom էլ. հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Հասարակագիտության ամբիոնի երկրորդ կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթները:

4. **ԼՍԵՑԻՆ** - «Իրավագիտություն /մանկավարժություն/» մասնագիտության հեռակա մագիստրատուրայի 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների հիմնական դրույթների հակիրճ ներկայացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նախապաշտպանությանը ներկա մագիստրոսները ներկայացրեցին իրենց մագիստրոսական ատենախոսությունների հիմնական դրույթները: Է.Հովհաննիսյանը ուսանողներին հորդորեց շատ ավելի լավ պատրաստվել քննական հանձնաժողովին պատշաճ ներկայանալու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Արաքսյա Աղաբաբյանի, Քրիստինե Աղաբեկյանի, Տարոն Խաչատրյանի, Արուս Հակոբյանի, Մերի Հարությունյանի, Սարգիս Հարությունյանի, Աննա Հովեյանի, Ասատուր Միսակյանի, Սարինե Պապյանի, Օվսաննա Պետրոսյանի, Ռաֆայել Սարգսյան, Դավիթ Վարդանյանի, Մելանյա Քալաշյանի, Դերենիկ Սաֆարյանի մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

5. **ԼՍԵՑԻՆ -** Առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների հիմնական դրույթների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կուրսային աշխատանքները պաշտպանած երեք ուսանողներին գնահատել գերազանց:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №9

2020թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կոծինյանը, Ս.Մանուկյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը, Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. «Հասարակագիտություն» մասնագիտության հեռակա բակալավրիատի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների ընթացքը և «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների արդյունքները: **/զեկ. Ա.Կարեյան, Վ.Հովհաննիսյան/**
2. 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, քննական տոմսերի հաստատում: **/զեկ. դասախոսներ/**
3. Google Classroom հարթակում տարվող աշխատանքների մասին: **/զեկ. դասախոսներ/**
4. 2018-2019թթ. ռազմավարական պլանի կատարողականի քննարկում և 2020 թ. տարեկան գործողությունների պլանի հաստատում՝ ելնելով ՀՊՄՀ-ի ռազմավարական ծրագրի, ֆակուլտետների, ամբիոնների գործողությունների պլանների դրույթներից:
5. Ընթացիկ հարցեր /հայտարարություններ/:

1. **ԼՍԵՑԻՆ** – «Հասարակագիտություն» մասնագիտության հեռակա բակալավրիատի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների ընթացքը և «Իրավագիտություն /մանկ./» մասնագիտության 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է.Հովհաննիսյանը հայտնեց, որ 3-րդ կուրսի պրակտիկան անցնում է նորմալ, իսկ 5-րդ կուրսի պրակտիկան ավարտվել է: Արդեն կազմվում են գրաֆիկները մարտ ամսին պրակտիկայի թղթապանակների պաշտպանություն իրականացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. **ԼՍԵՑԻՆ** - 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, քննական տոմսերի հաստատման մասին **/զեկ. դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դասախոսները ներկայացրեցին 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և ամփոփիչ քննությունների հարցաշարերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և ամփոփիչ քննությունների հարցաշարերն ու քննական տոմսերը:

3. **ԼՍԵՑԻՆ -** Google Classroom հարթակում տարվող աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դասախոսները հայտնեցին, որ երկրորդ կիսամյակի դասընթացների նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, առարկայական փաթեթներն արդեն տեղադրված են հավելվածում, ուսանողները կցվել են դասընթացներին և շուտով կտեղադրվեն նաև գնահատվող հանձնարարությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Google Classroom հարթակում տարվող աշխատանքների արդյունքները համարել բավարար:

4. **ԼՍԵՑԻՆ** - 2018-2019թթ. ռազմավարական պլանի կատարողականի և 2020 թ. տարեկան գործողությունների պլանի հաստատման մասին ելնելով ՀՊՄՀ-ի ռազմավարական ծրագրի, ֆակուլտետների, ամբիոնների գործողությունների պլանների դրույթներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է.Հովհաննիսյանը ներկայացրեց 2018-2019թթ. ռազմավարական պլանի կատարողականը և 2020թ. տարեկան գործողությունների պլանը, որը բխում է ՀՊՄՀ-ի ռազմավարական ծրագրից և ֆակուլտետի գործողությունների ծրագրից:

Նշվեց, որ ամբիոնի կողմից ապահովվել են դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկումը կրթական ծրագրերում, խթանվել է ամբիոնի կադրային ներուժի դասավանդման արդյունավետության բարձրացումը, նորարարական ակտիվությունը և ստեղծագործական նախաձեռնությունը, բարձրացվել է մագիստրոսական, ատենախոսությունների և ավարտական աշխատանքների որակը: Ամբիոնը նպաստել է միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպմանը, քայլեր է ձեռնարկել խոստումնալից կադրերի խրախուսման, աջակցման, պահպանման, նոր անհրաժեշտ կադրերի ներգրավման ուղղությամբ, ստեղծել է ուսանողական համակազմի բազմակողմանի զարգացման նախադրյալներ, ինչպես նաև բարելավվել է ամբիոնի կառավարման գործընթացը՝ գիտական և մեթոդական արդյունավետ միջոցառումների ձեռնարկմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2018-2019թթ. ռազմավարական պլանի կատարողականը և 2020 թ. տարեկան գործողությունների պլանը:

5. **ԼՍԵՑԻՆ** - Վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատում: **/զեկ. Վ.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ.Հովհաննիսյանը հայտնեց, որ վերականգնված բոլոր ուսանողներին տրվել են թեմաներ և առաջարկեց հաստատել աշխատաների թեմաներն ու ղեկավարներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներն և ղեկավարներին:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №10

2020թ. մարտի 30-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի առցանց նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ս.Մանուկյանը, Գ.Մարուքյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը, Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Միջանկյալների անցկացման փոփոխությունների քննարկում:
2. Հեռակա 5-րդ կուրսի միջանկյալների անցկացման մասին:
3. Առցանց ուսուցման ընթացքը, արձանագրված բացթողումները:
4. Պրակտիկաների և դրանց պաշտպանությունների մասին:
5. Թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը:
6. Ընթացիկ հարցեր /հայտարարություններ/:

1. **ԼՍԵՑԻՆ** - Միջանկյալների անցկացման փոփոխությունների մասին**/զեկ. Վ.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Հովհաննիսյանը հայտնեց, որ ստեղծված իրավիճակում, կախված առարկայի առանձնահատկություններից անհրաժեշտ է ընտրել միջանկյալ ստուգման անցկացման եղանակը՝ ռեֆերատ, էսսե, թեստ ևն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. **ԼՍԵՑԻՆ** - Հեռակա 5-րդ կուրսի միջանկյալների անցկացման մասին: **/զեկ. Վ.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պաշտոնակատարը հայտնեց, ֆակուլտետի որոշմամբ հեռակա 5-րդ կուրսերի միջանկյալ գրավոր աշխատանքները classroom-ով չեն անցկացվելու: Անհրաժեշտ է աշխատանքներն ուղարկել դասախոսների պաշտոնական էլեկտրոնային հասցեներին, որից հետո ստուգված աշխատանքները, դրանց գնահատականներն ու հարցաշարերը դասախոսները կտեղադրեն ամբիոնի կողմից բացված համապատասխան թղթապանակներում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն:

3. **ԼՍԵՑԻՆ** - Առցանց ուսուցման ընթացքը, արձանագրված բացթողումները: **/զեկ. Վ.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մասնագետը նշեց, որ առցանց ուսուցումը կազմակերպվում է Google Classroom հարթակում Meet տեսահանդիպումների միջոցով: Դասախոսները պետք է հետևեն ԿԷԿ բաժնի ցուցումներին, իսկ ամբիոնը ամեն շաբաթ հաշվետվություն կներկայացնի ԿԷԿ բաժնին՝ կատարված աշխատանքի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն:

4. **ԼՍԵՑԻՆ** - Պրակտիկաների և դրանց պաշտպանությունների մասին: **/զեկ. Վ.Հովհաննիսյան/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է.Հովհաննիսյանը հայտնեց, որ պրակտիկաներն ու պաշտպանությունները անցկացվելու են առցանց եղանակով՝ սահմանված գրաֆիկներին համապատասխան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն:

5. **ԼՍԵՑԻՆ** - Թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: **/զեկ. դասախոսներ/**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դասախոսները հայտնեցին, որ աշխատանքների մեծ մասն արդեն պատրաստ են և կարող են գնալ նախապաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկայի նախապաշտպանությունը կազմակերպել ապրիլի 22-ին:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №11

2020թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի առցանց նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ս.Մանուկյանը, Գ.Մարուքյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը, Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:

/Զեկուցող՝ դասախոսներ /

2. Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտության առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն:

/Զեկուցող՝ դասախոսներ /

1. ԼՍԵՑԻՆ - Հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության մասին:

/Զեկուցող՝ դասախոսներ /

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների ղեկավարները հայտնեցին, որ աշխատանքները պատրաստ են: Ուսանողներըն ներկայացրեցին իրենց աշխատանքների հիմնական դրույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ /միաձայն/ – Հաշվի առնելով, որ ուսանողները ներկայացրել են ղեկավարների կողմից հրապարակային պաշտպանության երաշխավորված աշխատանքներ և նախապաշտպանությանը ներկայացրեցին նաև իրենց աշխատաքների հիմնական դրույթները, որոշեցին ամբիոնին հատկացված 10 աշխատանքներն էլ երաշխավորել հրապարակային պաշտպանության: Նշանակվեցին նաև աշխատանքների գրախոսները:

2. ԼՍԵՑԻՆ - Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտության առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նախապաշտպանությանը ներկա 2 մագիստրոսները ներկայացրեցին իրենց մագիստրոսական ատենախոսությունների հիմնական դրույթները:
Արտահայտվեցին ղեկավարներ Գ.Մարուքյանը և Վ.Հովհաննիսյանը: Նրանք տեղեկացրեցին, որ մագիստրոսների պատրասվածության աստիճանը կարելի է գնահատել բավականին բարձր:

ՈՐՈՇԵՑԻՆ /միաձայն/ - Մագիստրոսական 2 ատենախոսությունն էլ երաշխավորել հրապարակային պաշտպանության և նշանակել գրախոսներ:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

Արձանագրություն №12

2020թ. մայիսի 25-ին տեղի ունեցավ Հասարակագիտության ամբիոնի առցանց նիստ: Նիստին ներկա էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դեկան Է.Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Վ.Հովհաննիսյանը, Լ.Շիրինյանը, դասախոսներ Ա.Կարեյանը, Ա.Կոծինյանը, Ս.Մանուկյանը, Գ.Մարուքյանը, Ն.Տոնոյանը, Ա.Փխրիկյանը, Լ.Սարվազյանը, Հ.Սուքիասյանը, Ս.Բարխուդարյանը: Նիստը վարում էր ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտության հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:

1. **ԼՍԵՑԻՆ -** Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտության հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների հիմնական դրույթների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Վ. Հովհաննիսյանը, Ն. Տոնոյանը, Գ. Մարուքյանը, Ա. Կարեյանը: Դասախոսները հայտնեցին, որ ի տարբերություն առկա բակալավրի, հեռակայում աշխատանքներն ավելի թույլ են:

ՈՐՈՇԵՑԻՆ /միաձայն/ – Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսանողները ներկայացրել են ղեկավարների և գրախոսների կողմից հրապարակային պաշտպանության երաշխավորված աշխատանքներ և նախապաշտպանությանը ներկայացրեցին նաև իրենց աշխատաքների հիմնական դրույթները, որոշեցին 29 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտ.՝ Է.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան